

կենդիւրները չհաւատաւ անոնց սնոտի աւսածներուն, իրր թէ գերբնական մարդիկ են, ինչպէս Սիմոն մոզն, « որ մոզէր և ապշեցուցանէր զազգն Սամարացոց, ասել զանձնէ թէ իցէ մեծ ոռն »: Վասն զի « յիմար մարդիկ ի չպատահելն չհային, բայց եթէ զմինն պատահել տեսանիցեն » զայն առաւել վերացուցանեն, և ի լսելիս ամենեցուն արկանեն »: Այնու հանդերձ սուրբ Հայրապետս, զիջանելով բնութեան բնական երևոյթներուն՝ կը շնորհէ թէ մարդս երբեմն դիւթերու ներգործութեամբ կրնայ փափաքին հասնիլ կամ ցաւերուն բժշկութիւն գտնել: Բայց այդ պատահումն ոչ դիւթէն է և ոչ սատանայէն, այլ մարդու ենթակայական (subjectif) ներգործութիւնով: Ճիշդ այնպէս, ինչպէս տասն և իններորդ դարուն Յ. Մ. Եարկօի զբաւրոյն կը սովորեցնէր իրր նոր բան մը՝ հրապուրիչ կոչումներով. թշկական հաւատք, ներշնչութիւն, կամ քնաշնչութիւն (auto-suggestion), ուզելով նուաստացնել ՀՐԱՇԻ արդիւնքն և աստուածաբանական հաւատքի ոյժն՝ բնութեան Արարչի երկրանկութիւնն և զօրութիւնն, իսկ Մանդակունի կը սովորեցնէ. « Այլ դիւթի և ուռթոյ զօրութիւն ոչ լինի, և եթէ եղեալ տեսանես ի յանկարծ, որպէս ասացին, ոչ եթէ յուռթէն և ի դիւթէն եղև, բայց զի դու այնպէս հաւատացեր, թոյլ ետ Աստուած այնպէս լինել » ըստ քում այնպէս հաւատալոյն »:

Ուրեմն մարդ կարող է բնութեան գաղտնի ազդեցութեամբ արամաղորտիլ բժշկութեան բնական ճանապարհով, և զորան չենք կարող հրաշք կամ հրաշագործութիւն կոչել. այլ զայն կը կոչենք հաւատք որ ի վեր է բնութեան օրէնքներէն, և զոր գիտութիւնն, այսօր և վաղը, բնական օրէնքներով բացատրելու անկարող պիտի խոստովանի Եփայտոսի կախարդներու պէս, ասեղով. « Աստուծոյ մատը կայ այս բանի մէջ »:

Հ. Գ. ՆԱԼԱՔԵՏԵԱՆ



ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմավէպ, 1924 էջ 335)

Ի թ.

ՄԱՐԴԱԿԱՆԱՐՄՈՒԹԻՒՆ ԱՊՈՒՍԱՅԻԴԻ

Որինակ մը եւս ահա, թերեւս արդէն դիտածներուս ալ ընտրեալագոյնը, որ տօմարական և աստղաբաշխական ու աշխարհագրական խառն գրուածներու հետ դրուած է, ձեռագիր միջակ հատորի մը մէջ:

Կաշեպատ փայտեայ պահպանակներով լաւ կազմուած է. ունի 19 հարիւրորդամեղ և ձեռնութիւն, 14,5 հարիւրորդամեղ լայնութիւն և 3 հարիւրորդամեղ թանձրութիւն և կը կրէ ձեռագրատան 968 թիւը: Սկզբն ու վերջը կայ մագաղաթեայ մէկ մէկ թերթ, որոնք հին երկաթագիր խոշոր գրեղով կը ներկայացնեն Աւետարանէ կտորներ:

Ամրող գործը կը բաղկանայ 292 էջեր և 146 թերթէ. թուղթ բամբակեայ է և զիրը բոլոր, և այնչափ մաքուր՝ որ տպագրուածի պատրանքը կու տայ:

Ընդօրինակութիւնը կատարուած է Սարգիս Փեօքաճեանի անուն անձին ձեռքով, իւրով քաղաքին մէջ ԹԿՁ (1066 - 551 = 1617) թուին. թէեւ տեղ մ'ալ կը յիշուի ՍԱՐԻՈՆ ԲԱՐԵԹՅԻ գրիչ մը, բայց ամբողջութիւնը առաջինին գործն է:

*

Մարդակազմութիւնը, զոր միայն ուշադրութեան առարկայ կ'առնեմ, կը գրաւէ 147-170 էջերը, կը կրէ՝ Ապուսայիդի անունը, և ինչպէս արդէն ըսի, գտնուած օրինակներուն ալ լաւագոյնն է, և ամենէն կարևորը, որովհետև կը պարունակէ Ասար Սեբաստացիին անունը, և զմեզ աւելի կը մօտեցնէ այս բժշկին, որ գիտենք թէ Ապուսայիդի Մարդակազմութեան կարգաւորիչ խմբագրիչն եղած է:

Բայց նախ կարդանք Յիշատակարանները, որոնք չորս հատ են.

Առաջինը կը գտնուի 19րդ էջին ստորոտը, և է.

« Ի բ՛վին Ռիջ գրեցի այս ի խոցն առ զայնկոռն ի քաղաքն իյով, հոգևերևր. Լ. « սուտանուն Դո, 1, Էո, ար իս ըզգործ »: Այս ծածկագրութեան առաջինը՝ (2000) Ս է, (1) Ե Ա, երրորդը՝ (5000) Բ, չորրորդը 1 + 2 = 3 = Գ. է, որոնց վրայ իՍ վերջաւորութիւնն ալ դնելով՝ կ'ուշենանք ՍԱՐԳԻՍ անունը: Այս թուականը կը յիշուի նաև 125րդ էջին վրայ՝ « Բ՛վին Ռիջ. իյով քաղաքն » վերտառութեամբ և « Յիշեալ Սարգիս » բառերով:

*

Երկրորդ Յիշատակարանը կը գտնուի 132րդ էջին վրայ և է այսպէս.

« Ո՛վ ընթերցող, երևս անկեալ կադալեմ « գգադափարադ որ անմկադդի յինիք գրիս. « զի ձերացեալ անձամբս Ինսմանս գոյով « ձեռնարկեցի ի սմայ Աստուծոյ ողորմութեան յաւարտացի և փափաք սրտիս « կատարելի, և զիդս իմ լցուցի: Հաստը « սմար սրտիս կադալեմ զընթերցողդ որ « անեմխանն զաստուածողորմին յի խնայեք, « և աստուած զձեզ յիշէ յիտ միւս անգամ « գալուստն ամեն: Էս մեղորս քոտեցի սուտ « անուն Սրգիս:

Սոյն տողերէն կ'իմանանք ուրեմն թէ Սարգիս 25 տարեկանին սկսեւ է այս ընդօրինակութիւնը, և հազիւ զայն աւարտեւ է իւր ձեռութեանը՝ Ռիջին, այսինքն 1617ին, որ ասոն եթէ զինքը 60 տարեկան ենթադրենք՝ ծնած կ'ըլլայ 1557ին, ուստի ընդօրինակութիւնը ձեռնարկած 1582ին:

*

Երրորդ Յիշատակարանը, որ Յիշատակարան ըլլալէ աւելի գրութեան թուականը ցուցունող խորան մ'է, կը գտնուի՝ 219րդ էջին վրայ:

Առաջինութեան խորանն է այն, վերեւը

ողորմութիւն գրուած, և ներքեւն ալ կարգաւ, հաւատ, յոյս, սէր, երկիր, համբարութիւն, աշխատութիւն բառերը, և նաեւ՝ ուխտ, արդարութիւն, արքունութիւն, ժողովութիւն, իրաւունք, անհատականութիւն, դատաստան, սրբութիւն, աղօթք, շնորհաբանութիւն, արդարութիւն, քաղաքութիւն, պահք և բարի խրատ, եղբայրութիւն, խոստովանութիւն, զղուշիւն, խոնարհութիւն խորհրդաւոր բառերը, այժմ աշխարհի մարդկութեան բառարանն. ներէն սրբուած ջնջուած ՄԵՍ ՊԱՏՈՒԻՐԱՆԵՐԸ:

Այս բառերու կերտած խորանին ձախաւ կողմը գրուած է՝ « ՀԱՅՈՑ ԹՈՒԻՆ ՌԻՋ », իսկ աջակողմը « ՖԻԱՆԿԻ ՌՈՒԷ »: որ է՝ ընդօրինակութեան թուականը 1617:

*

Յիշատակարաններուն Չորրորդը որ 244րդ էջին վրայ կը գտնենք՝ հետեւեալն է.

« Ո՛վ եղբայր քօրանիացի տիրացոյ Սար « զիս, երբ օքտիս ի սմանե գոյգեամեզ « ԱՍԱՐ Սերաստիացիս յիշեալ միով հայր « մեղայիս ի տէր և բարերար տէրն մեզ « և ձեզ առ հոտարակ ողորմեցի ամեն »:

Էս առաջին ակնարկով կը կարծուի թէ զայն տողերը Ասար Սերաստացին ինքն է, բայց ո՛չ. Սարգիս Քեօթահեացին է որ կը գրէ իրեն համար և կ'ուզէ յիշատակել զԱՍԱՐԸ, իբրեւ հեղինակ կամ գրող ընդօրինակած Մարդակազմութեան:

Այսպէս՝ ուրեմն 1617 թուին, Ասար բժիշկը գուցէ արդէն գտած էր իւր եղբւրական վախճանը. չէ՞ որ Կ'աւանդուի՝ թէ Արիս գետին մէջ խեղդուած է նա և թէ 1614ին՝ բժշկարան մը գրիլէ յետոյ այլ ևս չիկայ անոր մասին որ և է յիշատակութիւն:

*

Ասարի վերախմբագրած Ապուսայիդի այս Մարդակազմութիւնը, ցարէ տեսածներուս

1. « ՀԱՆՐԱՅ ԱՄՍՈՐԵԱՅ » 1914 Մոյիս.

ամենէն հինը և ընտրելագոյն օրինակն է. Սարգիս Գեօթահեացի շատ մեծ խնամքով արտագրած է զայն, և թերևս բուն իսկ Ասարի ձեռագիրը աշխատութենէն, բայց զծրախտաբար ամբողջական չէ, որովհետեւ վերջերէն կը պակսին քանի մը գլուխներ, ինչպէս կը հաստատուէ քաղղատութիւնը զոր ըրի՝ Եովս եղած արտագրութեան հետ, զոր Պարիսի Bibliothèque nationale-ի մէջ օրինակին վրայէն ըրած եմ 1889ին:

Կարևոր կը համարիմ սակայն Վենետիկի այս օրինակին Յառաջարանութիւնը միայն գրել հոս, որ ցարզ կարդացածնեւրուս ամենէն անսխալն է և է հետեւեալը.

« Ըստուցիս ձարտաբոք ընտրած իմաստասիրաց և թշկական վարդապետաց հեշեմացոցն յունաց, և երբսոցոց, իմանալոյ գրեութիւն մարդոյն: Զստեղծութեան, զանշամբն, զգոյնսածքն և զքնութիւնն, թէ զինչ և ի սոցանկ ի միմեանս գործ, և թէ զամենայն անդամս մարմնոյն որպէս և առգտանէն: Եւ զցառոցն շարժմունս և զղեղնութեան օրտակարութիւնն, զոր իմացեալ գրեցին թշկապետոքն Գաղիսանոս, Արիստոտել, Բագրատ, և ի սոցանկ սփեմցաւ յամենայն սոցոս, ի յայն, և յասորիս, և ի պարսիկս և ի հնդկիս, և յարապիկս, և ի յայլս¹ սփեմցաւ ընդ ոյրոստ տիեզեւս: Եւ զսոցա Ենտրանաց տփոդն ի վերոստ, և զնոց և ձարտաբոք սոցոս յսոցաց, և ի սոցայց հրամանեմ և ի բանիցն քննեալ ստուգեցին և ի իմացան ձարտարութեամբ: Ընդ որս և մի ոմն ի նոցանկ որ կոչիս պոտոսայիոյ՝ և առեալ ի գրոց թշկապետացն, յստակ և համատուտ ետ մեզ զայս բանս, ի զովոս և թիւն և ի վառար Աստուծոյ, որ ստեղծութեան և զարդարեաց ամենայն պիտոյիս, զոր կամեցաւ արար, և զորս հրամայեաց հաստատեցաւ, և ով որ կարէ քննել զիսոս և Աստուծոյ: Արար Աստուած զերկինս և զերկիր, զծով և զցամաք, զմեղեղենս և զհողմեղենս, զհողմոս և զշնչատոս, զա-

« նաստան և զքաշտանս, զսողունս, և զգետունս, « զծառ և զտունկըս: Արար և զաղամային « զմարմինն, ըստ պատկերի իւրոյ, և եղ « ի վերս նորս սիրել զԱստուած և պա- « հել զպատուիրանս նորս և ետ իմաստու- « թիւն և հանաք մարդոյն զտանել զա- « ղունտ թշկապետն, և ի ձեան թշկա- « կանութեան և զեղոցն օգտութեամբն, « պատրաստել մարմնոյն առ ի պիտս թըշ- « կութեան: Զի ի ձեան խոստովանութեան « առցէ զթշկութիւնն հոգոյն և ի ձեռան « թշկապետին, առցէ զթշկութիւնն և զա- « տղայութիւն մարմնոյն: Զսեղի որ ոչ իցէ « ստեղծ մարմնով, ոչ կարէ ծառայել Աս- « տուծոյ հոգով:

*

Ուրախութիւթ է, որ այսպէս կը շատնան հոս ու հոն Ապուսայիդի Մարդակագիտութեան օրինակները, ինչ որ մեծապէս կը զիւրացնեն՝ օր մը լաւագոյն և անսխալ օրինակի մը իրերարագրութեամբ արտագրութիւնը:

Ասոնք պիտի կրնան զիրար լրացնել, իրարու սխալները ուղղել, ճշգրէ գիտական բառերը և անմահ առնել յիշատակը ԱՍՍԻՍԵՆՍՈՅԻՆ, 16րդ-17րդ դարու պատկանող այդ հայ թիշկիին, որ Ամիրտով վաթէն ոչ նուազ պարծանք մ'է Հայ Թշկական Պատմութեան:

*

Ապուսայիդի մարդակագիտութիւնը, ինչպէս ուրիշ օրինակներու մէջ, այս տեղ ալ կը վերջանայ « Վասն բոսեղծման Է առն զամոցն » գլուխով. յետոյ ասոր կը յաւելուի՝ « Թաղաքս կազմութեան մարդոյն, Գրիգոր Նիւսացոյն ասացեալ է » վերնագրով խիստ համառօտ մաս մը՝ որ քաղուած կ'երևի Նիւսացոյն ընդարձակ գործէն, զոր գիտենք թէ Ստեփանոս Սիւնեցի եւ պիսկոպոսը Թարգմանած էր Տ. րդ Դարու մէջ:

*

Ս. Ղազարի այս Զեռագիրը՝ ժամանակին ընթացքին վերաբերած է Յովհաննէս

1. Պարսիկ օրինակին մէջ կար « և ի Հայս »:

անուն քահանայի մը, որուն համար Հասորին վերջը կը կարդանք, թէ՛ «Քահանայ օրհնուած է «ՌՄԺԵ» ին, այսինքն (1215 + 551) — 1766ին:

Ապուսայիդի Մարգարէականութեան օրինակ մը ևս կայ Վանքին մէջ և կը գրաւուի 1794 թուահամարով և Քրիստոսի 1723 թուին Ղալաթիոյ մէջ թարգմանուած է կատոնի «Գիրք Ոստոյցման» կոչուած գործին հետ, բայց այնչափ գէշ գրուած օրինակ մ'է՛ որ չ'արժէր խօսիլ վրան:

ՏՕԲԹ. ԱՂԱՐԱՄ Բ. ԹՈՒՐՈՍԵԱՆ

Վեհեպի — Մ. Ղազար

14 Յունուար 1923

(Շարումակելի)

ՄՊԱՀԱՆԻ ԶԱՆՈՒՄԱՆ ԳԱԽԱՐԸ

(Ալէքսանդր — Պարսիս — Կոստանդնուպոլիս)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 328)

Հիւանդութիւն և թշուառութիւն. — Չահարմանալի գիւղացու կեանքի ցաւերն ու դժբախտութիւնները բազմաթիւ են. նրա անհուն ցաւերից մէկն էլ գիւղերում տարածուած հիւանդութիւնները և բժշկի բացակայութիւնն է: Զնալ, յեղով, որ Չահարմանալի իր լեռնային գիրքի շնորհիւ առողջարար և բարեխառն օդ ունի, սակայն ժողովրդի մեծամասնութիւնը առողջապահական տարրական պայմաններու մասին հասկացողութիւն չունենալով և բժշկական միջոցներից զուրկ լինելով՝ տարեկան հարիւրաւոր անմեղ զոհեր է տալիս:

Հիւանդութիւնների տարածելու գլխաւոր պատճառը գիւղերում տիրող առասպելական կեղտոտութիւնն ու անապրութիւնն է: Հիւանդութիւնները տարածելուն նպաստում է նաև այն, որ գիւղացիներից շատերն իրենց հեռու չեն պահում տարափոխիկ հիւանդութիւններից. հիւանդին այցելելը սուրբ պարտականութիւն են համարում և շատ անգամ հիւանդի ամանից միասին են ուտում: Այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ գաւառը զուրկ է բժշկական ու է

օգնութիւնից. ամբողջ Չահարմանալում ոչ դեղատուն կայ, ոչ հիւանդանոց և ոչ էլ մի բժիշկ, որով սուր վարակիչ հիւանդութիւնների գէլաթում, գիւղացիներն սպիւլած դիմում են գիւղական «Նաքիմներին», զանազան պատու կանանց խորհուրդներին և շատ անգամ էլ տափրիներին, որոնք բժշկելու փոխարէն, աւելի ևս վատթարացնում և ծանրացնում են հիւանդութիւնը: Գիւղացին երբ տեսնում է, որ նրանցից ոչ մի «ճար» չկայ, յուսահատ դիմում է «գիր անող» կախարդներին կամ ապաւինում է սրբերի օգնութեան, որոնց զօր է մատուցանում, մոմ վառում, խունկ ծխում կամ քահանային աւետարան է կարդալ տալիս և օրհնած շուր է սրկում հիւանդի վրայ: Իսկ երբ այդ միջոցներն էլ չեն օգնում, այն ժամանակ հիւանդին տալիս են ուզած կերակուրն ու խմիչքը, որպէս զի նա շուտով առողջանայ:

Ընդհանրապէս գաւառում տարածուած է ժաղիկ և ալըսացու հիւանդութիւնները երեխաների մէջ, իսկ տեղային յատուկ հիւանդութիւնը, որ վերջին 20 տարիների ընթացքում տարածել է Չահարմանալում և տարել ու տանում է բազմաթիւ զոհեր, դա «կարմիր քամի» (սիֆիլիս)¹ կոչուած տարափոխիկ հիւանդութիւնն է, որ տարածուած է թէ՛ կանանց և թէ՛ տղամարդկանց մէջ, համարեա թէ իւրաքանչիւր գիւղում կարելի է գտնել 1-5 ներկայացուցիչ յիշեալ հիւանդութեամբ վարակած: Շատ գիւղերում կան մէկից աւելի տներ, որոնց բոլոր անդամներն էլ, փոքրից մինչև մեծը, վարակած են սիֆիլիսով և տասնեակ տարիներից ի վեր տանջւում են, փրչանում և ոչնչանում...

Այս այսպիսի անմխիթար դրութեան մէջ է գտնուում Չահարմանալի հայ գիւղացիութեան բժշկական զօրծը: Անհրաժեշտ է և հրամայողապէս՝ անօգնական և անճար դրութեան մէջ տառապող խեղճ գիւղացիներին մի միայուն բժիշկ և դեղորայք ուղարկել, նրանց այդ ցաւալի ու կորստաբեր դրութիւնից ազատելու համար:

ԴՄԱՆ, քաղաքում և մեակոյց. — Գիւղացիների սեւեղով մասը Աստոյ նախասահմանութիւնն է, որ իւրաքանչիւր մարդու ճակատին դրած է և ոչ ոք չի կարող նրանից խուսափել: Աստոյ հրամանով Գարբիէլ հրեշտակապետը գալիս է երկնից և կտրում մարդու կեանքը:

Եթէ մարդը հեշտութեամբ է աւանդում հո-

1. Այդ հիւանդութիւնը բերել են հնդկաստանից: